



Հ Ա Յ Ս Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Կ Բ Թ Ո Ւ Թ Յ Ա Ն Ե Վ Ք Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ս Ե Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
Ա Շ Ե Ա Տ Ա Կ Ա Ռ Ս

Կ Բ Թ Ո Ւ Թ Յ Ա Ն Պ Ե Տ Ա Կ Ա Ն Տ Ե Ս Չ Ո Ւ Թ Յ Ա Ն Պ Ե Տ
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 24-Ա

«29» ապրիլի 2016թ.

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի աշխատանքային ծրագիրը՝

Կարգադրում եմ.

1. Հաստատել ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի մայիս ամսվա ստուգումների ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հրապարակել ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի մայիս ամսվա ստուգումների և գործողությունների ժամանակացույցները՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչ՝

Ա. Կարապետյան

2016Թ. ՄԱՅԻՍ ԱՄՍԿԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

h/h	Ստուգվող սուբյեկտի անվանումը	Ստուգման ժամկետները
1.	Ստուգումներ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Մեղրի, Քաջարան, Ագարակ քաղաքների թվով 36 նախադպրոցական ուսումնական հաստատություններում	I տասնօրյակ
2.	Ստուգումներ Երևանի Էրեբունի վարչական շրջանի թվով 12 նախադպրոցական ուսումնական հաստատություններում	I, II տասնօրյակներ
3.	Տեսչավորում ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հ. 4, արհեստագործական պետական ուսումնարանում	I տասնօրյակ

**2016Թ. ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

N	Գործողության անվանումը	Կատարման պատասխանատուն	Կատարման ժամկետը
1.	ՀՀ հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողների հաճախումների նկատմամբ վերահսկողություն	Ուսումնասիրություն իրականացնող խմբեր	I,II,III տասնօրյակներ
2.	ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, Մեղրիի, Ագարակի, Քաջարանի քաղաքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում ուսումնասիրություններ	Ուսումնասիրություն իրականացնող խումբ	II տասնօրյակ
3.	ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման, գնահատման, պետական ամփոփիչ ստուգման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանման գործընթացի նկատմամբ վերահսկողություն	Ուսումնասիրություն իրականացնող խմբեր	III տասնօրյակ
4.	Դիմումներում և բողոքներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	I,II,III տասնօրյակներ